ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2020 թվականի փետրվարի 13-ի N 2-Լ

Լսելով կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ Մկրտիչ Ավագյանի հաղորդումը համալսարանի գործունեության ռազմավարական ծրագրի մասին՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. ՀՊՄՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2018-19թթ. նախատեսված գործողությունների կատարողականի ընթացքը համարել բավարար:

2. Հավանություն տալ ՀՊՄՀ 2021-2025թթ. ռազմավարական նոր ծրագրի մշակման ժամանակացույցին և ճանապարհային քարտեզին:

3. Համալսարանի ստորաբաժանումներին և ենթակառուցվածքներին.

- Մինչև 2020թ. մարտի 15-ը ֆակուլտետների խորհուրդներում, ամբիոններում, վարչություններում և բաժիններում քննարկել 2018-19թթ. ռազմավարական պլանի կատարողականը և հաստատել 2020 թվականի տարեկան գործողությունների պլանը՝ ելնելով ՀՊՄՀ-ի ռազմավարական ծրագրի, ֆակուլտետների, ամբիոնների գործողությունների պլանների դրույթներից, ներկայացնել այն ՀՊՄՀ կրթության որակի ապահովման և կառավարման բաժին:

4. ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը.

- Մինչև 2020թ. մարտի 15-ը ***պատրաստել ռեկտորի հրամանի նախագիծ*** ՀՊՄՀ զարգացման ՌԾ-ի 2021-2025 թթ. մշակման աշխատանքների իրականացման վերաբերյալ՝ համաձայն ներկայացված ժամանակացույցի և ճանապարհային քարտեզի:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ